№ 162 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 27 1902 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 27 № 162

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է օգտվել յարմար առիթից.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Զանգեզուրի գաւառից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց վանքը Երուսաղէմում. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.Թերուս կնոջ խոստովանքը.

ՊԷՏՔ Է ՕԳՏՎԵԼ ՅԱՐՄԱՐ ԱՌԻԹԻՑ

Այն երկրաշարժները, որոնք վերջին տարիները տեղի ունեցան Անդրկովկասում և որոնք այնքան զբաղեցրին մարդկանց մտքերը, չէր թելադրեցին ոչ օրի մեր ինտելիգենցիայի շրջանում օգտվել այդ խոշոր առիթներից և ծանօթացնել ազգաբնակութիւնը թէ ինչ է երկրաշարժը, ինչից է նա առաջանում, ինչ կապ կայ երկրաշարժի և հրաբուղխի մէջ, ինչ նոր հայեացքներ են այժմ մշակված հրաբղխային երևոյթների վերաբերութեամբ, ինչ բնաւորութիւն են կրում Կովկասում եղած երկրաշարժները և ինչով են տարբերվում ուրիշ տեղերում եղած երկրաշարժներից։

Ոչ օր չէր ցանկացաւ դասախօսութիւն կարդալ և մոգական լապտերի միջոցով լուսաբանել այն երևոյթները, որոնք այնքան մեծ սարսափ են բերում մարդկանց վրա և յաճախ ենթարկում են նրանց սոսկալի զրկանքների և զոհաբերութիւնների։ Ոչ ոք չէր ցանկացաւ հանրամատչելի գրքոյկներ հրատարակել և գիտական բացատրութիւնների միջոցով ցրել այն նախապաշարմունքները, որոնք տարածված են ժողովրդի մէջ այդ երևոյթների ծագման և արտայայտութեան վերաբերութեամբ։

Հրաբղխային և երկրաշարժային այն վաղուց չէր տեսնված խոշոր երևոյթները և այն սոսկալի աւերումները, որոնք տեղի ունեցան Մարտինիկա կղզում, առաջ են բերել եւրոպական գրականութեան մէջ անթիւ ուսումնասիրութիւններ։ Հրատարակվել են բազմատեսակ յոդուածներ, բրոշիւրներ, լուսանկարչական ալբոմներ, որոնք զաղափար են տալիս տեղի ունեցած երևոյթների ու դէպքերի մասին և լոյս են սփռում այդ երևոյթների ծագման խնդիրների վրա։

Գիտութեան մէջ վերջին ժամանակները երևացել են նոր հայեցակէտեր երկրագնդի կազմութեան, երկրի ներքին շերտերի դրութեան, ստորերկրեայ ջերմութեան աստիճանների և ուրիշ այդ տեսակ հարցերի վերաբերութեամբ, որոնք սակայն բոլորովին անյայտ են մնացել մեր հասարակութեան համար։

Մենք օրինակ բերինք երկրաշարժային, հրաբղխային երևոյթները, իբրև շատ խոշորները և աչքի ընկնողները, որոնք այնքան մեծ ցնցում պատճառեցին մեր հասարակութեանը. իսկ դրանցից դուրս որքան ուրիշ երևոյթների մենք ականատես ենք մեր առօրեայ կեանքում, որոնք յիրաւի այնքան սարսափելի արտայայտութիւն չունեն, ինչպէս առաջինները, սակայն պարունակում են իրանց մէջ մեծ գիտական հետաքրքրութիւն և շատ անգամ շօշափում են մարդկանց տնտեսական և բարոյական շահերը։

Ցարմար առիթով ասած խօսքը, արտասանած դասախօսութիւնը և հրատարակած գրքոյկը անմիջական տպաւորութիւն են գործում և շուտ իւրացնվում են ազգաբնակութեան կողմից։ Գիտութիւնները տարածելու այդ եղանակը, որ մեծ աջողութեամբ գործադրվում է լուսաւորված երկիրներում, պէտք է մուտք գործէ և մեր մէջ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՒԱՌԻՑ

Տաթեւ գիւղ, յուլիսի 18-ին

Շատ անգամ է գրված «Մշակի» էջերում եւ ամենքին յայտնի է, որ մեր վանքերը եւ եկեղեցիները, ենթարկված լինելով պորտաբոյծ վարդապետների եւ քահանաների խնամակալութեան, իսպառ աղքատացած եւ աւերման են մատնված։ Վանական կալուածները, շնորհիւ թոյլ, պետական կանոններին անտեղեակ եւ եսական շահերով գրգռված հոգեւորականների, ամենուրեք մատնված են կորստեան վտանգի եւ եթէ այս տխուր դրութիւնը շարունակվի մի քանի տարի եւս, անշուշտ մեր վանական միաբաններն առանց «աշտուռ հացի» պետի մնան եւ հինաւուրց արքաւայրերը գոմանոցի կամ ոչխարների փարախի պիտի փոխվեն։

Իրերի այսպիսի դրութեան մէջ՝ խիստ մխիթարական եւ ուրախալի է Տաթեւի վանքն այցելող ճանապարհորդի կամ ուխտաւորի համար։ Այստեղ դեռ շատ հեռուից նկատվում են գործունէութեան եւ վերանորոգութեան նշաններ։ Տաթեւի վանքը, իր աւելի քան հազարամեայ գոյութեան ընթացքում, ունեցել է ուրախ ու տխուր օրեր։ Հեռու լինելով հոգեւոր բարձրագոյն իշխանութեան անմիջական հսկողութիւնից եւ ճանապարհների վատ հաղորդակցութեան շնորհիւ անջատված լինելով քաղաքակիրթ աշխարհից,—վերջին տարիներս բոյն դրած վանահայր կոչվողները իսպառ ծծել եւ աղքատացրել են վանքն եւ եկամուտի աղբիւրները միանգամայն փակել են։ 1850 թուից Անանիա եպիսկոպոսի սկսած՝ վանքի եւ զանգակատան վերանորոգութեան գործը, որ իր տարաժամ մեկնելուն պատճառով՝ յանձնած էր իր յաջորդներին, շատ անշնորհք եւ անարեխիղճ կերպով մոռացութեան մատնվեց։

Մի անգամ էլ առիթ ներկայացաւ ինձ այցելել Տաթեւի վանքը, որը բոլորովին կերպարանափոխված տեսայ՝ իր արտաքին չքնաղութեամբ եւ ներքին կարգ ու կանոնով։ Երկու պատմական թանաքէքն, ուր ապրում էին միտրապոլիտներն, եւ տաճարի չորս կողմ գտնվող մի քանի տասնեակ խուցերն, որ երբեմն միաբանների բնակարաններ էին, ընդամենն մի տարի առաջ ներկայացնում էին աւերակների կոյտեր կամ թէ ձիերի, անասունների ախոռ։

Իսկ այսօր այդ թանաքէքը վերանորոգված են ամենագեղեցիկ կերպով, յատակ եւ առաստաղը տախտակված, լուսամուտները մեծացրած եւ ներքուստ ամբողջովին իւղաներկ կամ սպիտակացրած լինելով, միանգամայն յարդարած են վայելչապէս՝ ընդունելու բարձրաստիճան հիւրեր։ Հին սեղանատունը, որ ծուռ ու մուռ մուտքերով էր, ներսը քարեայ նստարաններով եւ սեղաններով, բոլորովին փոխված է։ Անցքերն ուղղած, կանոնաւորված են, նոր լուսամուտներ են բացված, քարի փոխարէն տախտակէ հիմնաւոր սեղաններ են շինված՝ նստարաններով հանդերձ՝ եւ այսպէս Տաթեւի վանքն ունի մի չքեղ սեղանատուն իր բոլոր անհրաժեշտ պիտոյքներով, ուր հիւրասիրվել կարող են վաթսունից աւելի միաբաններ եւ հիւրեր։ Ախոռատները, որ տաճարից ընդամենն 4—5 սաժէն հեռու էին, այսօր մաքուր եւ յարմար բնակարանների են վերածված, որոնցից մէկի մէջ հոգեւոր կառավարութեան ատեանն է, իսկ միւսներն ուխտաւորների համար իջեւանելու տեղեր։ Մի առ մի թուել երկար համարելով, թողնում եմ անձամբ այցելողներին իրանց աչքերով տեսնել այն եռուն գործունէութիւնն ու աննկուն աշխատութիւնը, որ տիրում է այդ վանքում, շնորհիւ նրա այժմեան վանահօր, երիտասարդ Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանցի։ Մինչդեռ աստուածաբան վարդապետները քաղաքներում չաղ-չաղ պաշտօններ ձեռք բերելու ետեւից էին, Ներսէս վարդապետը ինքնաբերաբար յայտնեց ցանկութիւն Տաթեւ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԵՐՈՒՍ ԿՆՈՋ ԽՈՍՏՈՎԱՆՔԸ

Ես մի չքաւոր մանրավաճառի աղջիկ էի։ 15 տարեկան հասակումս վերջացրի մեր տեղական ծխական ուսումնարանը։ 27 տարեկան էի, երբ ինձ մերձակէս աջողվեց ամուսնանալ մի շատ հարուստ մարդու հետ։ Եւ ահա ես յիշում եմ, թէ ինչպէս անցկացան իմ տարիները դպրոցը աւարտելուց մինչեւ ամուսնանալս։

Մայրս շարունակ ասում էր հօրս. «Պէտք է աշխատել մեր Անիւտայի համար մի արժանաւոր փեսացու գտնել... Ինքը գեղեցիկ է, եթէ մենք մի քիչ լաւ շարժվենք, անպատճառ լաւ տեղ կը գցենք»։

Սկզբում ես կարծում էի, թէ ինձ առաջարկութիւն անողներից որը ինձ դուր կը գար իր արտաքինով, նա էլ կը համարվէր իմ արժանաւոր փեսացուն։

Բայց յետոյ թէ մայրս եւ թէ բոլոր մեր ազգականները ինձ հասկացրին, որ փեսացուի արժանաւորութիւնը նրա հարստութեան մէջն է, իսկ հարստացուինը—նրա արտաքին գեղեցկութեան մէջ...

Եւ իսկապէս, որքան մօտ էի ծանօթանում ինձ շրջապատող կեանքի պայմանների հետ, այնքան խոր էի համոզվում մօրս եւ միւսների ասածների մէջ...

Ամեն տեղ, ամեն բանում տեսնում էի հարուստ գեղեցկուհիներ կենտրոն կազմած, իրանց շուրջը հաւաքած բոլորին, մանաւանդ նշանաւոր կրթված երիտասարդներին, որոնց ուղղակի խաղացնում էին իրանց մատների վրա...

Ես գեղեցիկ էի, բայց ինչ արած, որ հարուստ չէի։ Թէեւ հագնվում էի միշտ վերջին տարազով, աշխատում էի լինել հարուստների շրջանում, ոչ մի բանից յետ չէի մնում, լինում էի ամեն մի տեղ եւ պակաս ուշադրութիւն չէի դրաւում երիտասարդների կողմից, բայց այն չէր, ինչ որ վայելում էին հարուստ գեղեցկուհիները... երիտասարդները այդպիսիներին մի առանձին եռանդով էին փնտռում, իսկ ինձ մօտենում միայն այն դէպքերում, երբ նրանց նմանները բացակայ էին լինում եւ ապարէզը ինձ նմաններին էր լինում մնացած,—այնպէս որ լիակատար երջանիկ լինելու համար ինձ պակասում էր հարստութիւն։

Թէ ես եւ թէ մայրս մեր չքեղ հագուստներով եւ ամեն տեղ երեւալով չէինք կարողանում քողարկել մեր չունեւորութիւնը։ Ամենքն էլ գիտէին, որ մենք չքաւոր ենք եւ մի տեսակ արհամարանքով էին վերաբերվում մեզ։ Մանաւանդ հարուստ դասակարգի կանայք, որոնք ուղղակի ինձ հաշուում էին իրանց արհամարհոտ հայեացքներով։ Ես չէի կարողանում տանել նրանց թունալի ակնարկները, կծու նկատողութիւնները իմ այս կամ այն վարմունքի վերաբերմամբ։ Նրանց ատում էի բոլոր սրտից, նախանձը ինձ տանջում էր... բայց այդ տհաճութեան զգացմունքները իմ մէջ թագցնելով, սէր եւ յարգանք էի ցոյց տալիս նրանց եւ տեսնելիս, պատահելիս, ժպտալով մօտենում էի, սրտանց բարեւում։ Աշխատում էի միշտ հարուստ, աչքի ընկնող կանանց հետ գնալ այդի զբօսնելու, մինչեւ անգամ առանց նրանց տրամադրութեան վրա ուշադրութիւն դարձնելու, թեւակցում էի մէկի—միւսի հետ, հանաքներ էի անում, գովում էի նրանց, մի խօսքով ցանկանում էի եւ բոլոր ճիգ եւ ջանք թափում, որ հաճոյանամ նրանց, որպէս զի հեռուից ինձ նրանց մէջ նկատողները կարծեն, թէ ընկերական յարաբերութեան մէջ եմ հարուստ տիկինների եւ օրիորդների հետ, յարգանքով վերաբերվեն դէպի ինձ եւ չը համարձակվեն շատ խօսել ինձ վրա...

Մայրս երբեմն հրաւէրքներ էր սարքում եւ հրաւիրում հարուստ, թէեւ շատ հեռու ծանօթ եւ երբէք մեր տան չեղած տիկիններին, օրիորդներին, նրանց ծանօթ երիտասարդներին, այն նպատակով, որ կարողանար բարեկամութիւն, կապ պահպանել հարուստ դասակարգի հետ եւ վերջապէս նրանց միջից արժանաւոր փեսացու որսալ...

Ցիշում եմ, այդ հրաւէրքի օրերը մայրս շատ անհանգիստ էր լինում, վախենալով, որ իր աղքատ քոյրը յանկարծ դաբ, պատահէր հրաւէրքին եւ խայտառակէր մեզ իր մաշված շորերով, ճնշված հայեացքով մեր պատուաւոր հիւրերի առաջ։

Բայց թէ մեր հագնվելը, թէ հրաւէրքները մեզ վրա շատ թանգ էին նստում։

Մենք մեր ընտանեկան նիստ ու կացի մէջ ենթարկված էինք հազար ու մի նեղութիւններ։ Մեր երկու սենեակից բաղկացած բնակարանը, որոնցից մեծը փոքր ինչ մաքուր, նոր պաստառով եւ մի քանի ողորմելի կարասիքներով էր զարդարած, անչարժ պահում էինք հիւրերի համար, իսկ միւսը, փոքրը, որի մէջ անց էինք կացնում ամբողջ օրը, մեզ համար թէ ննջարան էր, թէ սեղանատուն, թէ խոհանոց։ Ջմեռը երկու տեղ վառարան չը վառելու համար, ամենքս մի սենեակում էինք քնում։ Մենք բոլորս 7 հոգի էինք։ Շաբաթը երկու անգամ էինք կերակուր պատրաստում, մնացած օրերը մի կերպ «եօլայ» էինք տանում։ Ինձնից փոքր քոյրերս զրկված էին ամեն մի բաւականութիւնից։ Երբ նրանք տրտունջ էին բարձրացնում, մայրս նրանց մխիթարում էր հետեւեալ խօսքերով. «Դիմացէք, երբ Անիւտան կամուսնանայ, հերթը ձեզ կը հասնի»։

Քանի ես մեծանում էի եւ զարգանում, այնքան էլ մեծանում էին պահանջներս եւ աւելանում ծախսերը։ Թշուառ հայրս մինչեւ անգամ ամառվայ շրջերին էլ չէր կարողանում վերադառնալ տուն հանգստանալու։ Նա թափառում էր արեգակի այրող ճառագայթների տակ, Արաքս գետի մերկ եւ ժայռոտ ափերում փքրած թրքաբնակ գիւղերում, միամիտ գիւղացիներին խաբելով, սուտ երդվելով՝ մանրունք վաճառում, որ մեզ մեր ծախսերի համար փող հասցնէ, իսկ պարտատէրերին—տոկոս...

Մայրս առաջներում ուրիշի համար ծածուկ կար էր անում, բայց յետոյ թողեց, վախենալով թէ մի գուցէ լոյս ընկնի այդ ամօթաբեր արարքը եւ մենք խայտառակվենք։

Քաղաքը, ուր ապրում էինք մենք, գաւառական խուլ անկիւններից մէկն էր։ Բացի ամառվայ երեք ամիսներից, երբ զանազան կողմերից ամարանոց եկողները կենդանութիւն էին բերում, միւս ամիսներում կեանքը մեռած էր լինում։ Մարդ չէր իմանում, թէ իր օրերը ինչպէս անցկացնէ եւ Նրանց տխուր միատեսակութիւնը ինչով ընդհատէ։

Պարապութիւնից շատ էի ձանձրանում, բայց հետաքրքիր պարապմունք էլ չէի գտնում։

Տնարարութիւնից զզվում էի, որովհետեւ ձեռներս չէի ուզում փչացնել։ Ձեռագործ չէի սիրում։

Էլի լաւ եղանակներին ժամանակս ուրախ էր անցկենում։ Ընկերուհիներիս հետ գնում էինք այգին, որտեղ սպասում էին մեզ մեր «սիմպատիաները», որոնց հետ երբեմն էլ աջողեցնում էինք քաղաքից դուրս զբօսանքի գնալ։

Վատ եղանակներին մի երկու ընկերուհիներով միասին անց ու դարձ էինք անում փողոցով, մեր ցանկացածներին հանդիպելու նպատակով։

Բայց երբ չէինք պատահում, շատ վատ էինք զգում մեզ եւ չէինք իմանում ինչ անել... Ճարներս կտրում էր՝ մի քանի անգամ գնում էինք անց ու դարձ անում այն փողոցով, այն պատուհանների տակով, որտեղ ապրում էին մեր «սիմպատիաները», որպէս զի մեզ նկատելով՝ դուրս գան։

Եթէ աջող էր անցնում, կարողանում էինք հանդիպել, այստեղ, այնտեղ փողոցներում կանգնած՝ խօսում էինք իրար հետ, մեր ցան-

գնալու՝ այնտեղի աւերակները չինելու եւ նախորդների օրով խճճված վիճակային գործերը կարգի բերելու նպատակով։ Ներսէս վարդապետը ներկայ պայմանների մէջ մի գիւտ է Տաթեւի վանքի համար, որի հզօր ջանքերով պիտի պաշտպանվեն վանքն ու վանական վիճելի դարձած կալուածները պետութեան եւ սահմանակից Թուրք բէգերի գրաւումներից։

Ամփոփենք մեր տեսածը—Տաճարի եւ զանգակատան վերանորոգութիւնը աւարտված է. միայն Գրիգոր Տաթեւացու դամբարանի տանիքն է մնում քարել, որը 750 ռուբլու կապալով տուած է հմուտ վարպետների։ Այս գործը կատարվում է բագուաբնակ պ. Լիւդվիկ Սերգէյեանցի խուստացած նուիրաբերութեամբ, որից մինչեւ օրս, ի դէպ է ասել, դեռ ոչ մի կոպէկ չէ ստացված։ Բացի երկու թանաբէքից, մի սեղանատնից, կառավարութեան սենեակից, միաբանների երեք սենեակներից, գրատունընթերցարանից եւ երեք հիւրասենեակից, որոնք արդէն պատրաստ են, ձեռնամուխ է եղած եւ կիսով չափ նորոգված են երեսունի չափ մեծ ու փոքր սենեակներ։ Վերջացնելով խօսքս, քաղցր է յուսալ, որ ցանկացողները կը չտապեն նիւթապէս օգնել եռանդով սկսված գործի աջողութեան իրանց նուէրներով, ուղարկելով դրանց Տաթեւի վանահօր անունով, Գօրիս գիւղը։

Նախկին Ուսուցիչ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յուլիսի 24-ին

Տարօրինակ կարգեր են տիրում Թիֆլիսի հայոց Վերայի գերեզմանատանը։ Այդտեղ կառուցած եկեղեցին գտնվում է անշուք դրութեան մէջ եւ կրում է աւերակի պատկեր, որի շուրջը հանգչում են Թիֆլիսի՝ գլխաւորապէս հարուստ դասակարգի սիրելիների ոսկորները եւ որ չունի մինչեւ անգամ կանոնաւոր ճանապարհ։

Տարօրինակ ասացի, որովհետեւ այդ գերեզմանատունը իր եկեղեցիով ունի երեք իրարից անկախ (եթէ չասենք հակառակ) հրամայողներ—տէրեր։ Առաջին տէրը հանդիսանում է տեղական ծխական քահանան իր օգնականով. սրա իրաւունքն է պահանջել հանգուցեալի տէրերից թաղման, հոգեհանգստի, պատարագի, ժամոց կոչված արդիւնքը եւ ծիսակատարութեան իր մասնակցելու վարձը, ըստ իր բարեհայեցողութեան։ Երկրորդը երէցփոխի պաշտօնակատար քահանան է, որ եւ մի ուրիշ եկեղեցու միաբան է. սրա իրաւունքն է պահանջել հանգուցեալի տէրերից ջահերի վարձը, դիսաեղանի եւ դիազարդի եկամուտները եւ մոմից եկեղեցում վաճառվածի արդիւնքը։ Սրան են ենթարկվում ժամկոչը եւ տիրացուն, ուրիշ ոչ ոք իրաւունք չունի սրանց հրամայելու եւ չեն էլ լսի։ Երրորդը՝ մի պատկառելի մանաժողով է իր վերակացութիւնները յայտնում, միւս օրվայ համար տեսակցութեան տեղ նշանակում եւ շտապ հեռանում գոհ սրտով։ Թէ չէ, երբ իզուր էր կորչում մեր աշխատանքը, չէինք կարողանում հանդիպել, մնում էինք կոտրված, մոլորված եւ չէինք իմանում, թէ ինչ անենք, ուր գնանք... Տներում չէինք կարող ազատ հաւաքվել մեր ցանկացած երիտասարդների հետ, որովհետեւ ամեն մէկի մայրը այդ թոյլ չէր տալիս։ Մեզանից միայն մի երկուսն էին բացառութիւն կազմում եւ ունէին այդ յարմարութիւնը, որոնցից մէկը ես էի։ Միւսները իրանց մայրերից ծածուկ էին պահում երիտասարդների հետ ունեցած բարեկամութիւնը։ Հայրս միշտ բացակայ էր լինում տանից, մայրս էլ բնաւորութեամբ մի թոյլ կին էր. մէկ նկատում էր, երկու լռում, որովհետեւ ես բոլորովին ուշադրութիւն չէի դարձնում նրա խօսքերի վրա եւ միշտ պատասխանում էի, թէ ժամանակը փոխվել է, թէ մենք, նորերս, չէինք կարող հների հասկացողութեան համապատասխան կեանք վարել, թէ մեր պահանջները ուրիշ են եւ այլն...

Սկզբում ամենքս շատ էինք ենթարկվում հասարակական կարծիքին եւ աշխատում էինք ամեն ինչ ծածուկ անել, որ մեր մանրակրկիտ հարեւանները ոչինչ չը նկատէին մեր վարմունքի մէջ եւ մեր ամուսնութեան հարցը չենթարկվէր հազար ու մի խոչընդոտների։

Մէկի վերաբերմամբ կասկածելուց յետոյ՝ մեր քաղաքացիք արթուն կը հսկէին նրան իրանց տախտակապատի, ցանկապատի արանքներով, այնուհետեւ ոչինչ չէր անցնի նրանց աչքից եւ ականջից... դեռ փոխ կառնէին տասնեակ աչքեր, ականջներ, ամեն մի վարմունքիդ խոշորացոյցով կը նայէին, մինչեւ անգամ հազալուդ, փռշտալուդ մէջ մի առանձին խորհուրդ կը գտնէին, ենթադրութիւններ կանէին եւ իրանց ենթադրութիւնները կը հաղորդէին հեռուներին, իբրեւ փաստ... Մի խօսքով, կը թողնէին իրանց սեփական բանն ու գործը, եւ դու կը դառնայիր նրանց զբաղմունքի գլխաւոր առարկան։

Բայց յետոյ հետամուտ եղանք եւ տեսանք, որ ընդհանուրի խօսակցութեանն են ենթարկված եւ լաւերը եւ վատերը։ Մանաւանդ չքաւոր դասակարգի կանայք եւ օրիորդները, որոնց ոչինչ չէր ներվում։ Այս վերջինների ամենամեղ վարմունքը, օրինակի համար, մէկ ծանօթ երիտասարդի հետ փողոցով անցնելը, երկու անգամ իրար վրա տանից դուրս գալը, թէեւ հէնց հարկաւոր գործի համար, համարվում էր ծանր յանցանք։

Հասարակութեան այդ անարդար վարմունքից օգտվելով, մենք ազատ ապարէզ դուրս եկանք եւ առանց քաշվելու անում էինք, ինչ որ սիրտներս ուզում էր։ Ես ազատ դուրս էի գալիս տանից սիրտս ուզածի չափ եւ ընդունում ինձ մօտ ում կը ցանկանայի։ Միայն անձրեւային օրերն էին լինում անտանելի, երբ ոչ կարելի էր տանից դուրս գալ եւ ոչ էլ մէկին սպասել։ Այդպիսի սաստիկ անձրեւային օրերը ես չէի իմանում օրը ինչպէս մթնացնեմ, սիրտս քիչ էր մնում տրաքվի նեղութիւնից, ճարս կտրվում էր՝ գիրք էի կարդում։

Ամեն մի գիրք ինձ դուր չէր գալիս։ Ես սիրում էի բռամանների այն տեսակները, որոնց մէջ սիրոյ տեսարանները նկարագրված էին լինում վառ գոյներով եւ երկար ու բարակ բացատրութիւններով, ինչ չէր պատահում, երբ կարդալու միջոցին, յանկարծ սիրոյ տեսարանները ընդհատվում էին վերացական, անհետաքրքիր դատողութիւններով եւ հերոսը իր հերոսուհու հետ անյայտանում էին աչքից, ես էլ նրանց իսկոյն գտնում էի ոչ թէ կարդալով, այլ թերթելով։

Ես միշտ գրքերից արտագրում էի գեղեցիկ ֆրազներ եւ անգիր սովորում նրանց, տեղին յարմար գործածելու համար, այնպէս ձր ես շատ ունէի բարձր մտքեր, գեղեցիկ գաղափարներ արտայայտող նախադասութիւններ, որոնց իբրեւ կեղծ գոհարներ ձեռք էի բերել շատ էժան գնով խելքս զարդարելու համար, որպէս զի արտաքին գեղեցկութեանս հետ ներդաշնակվէր եւ ներքին գեղեցկութիւնս։

Անփորձ եւ միամիտ երիտասարդները մինչեւ հիմա էլ, այդ ֆրազների շնորհիւ, ճանաչում էին ինձ, իբրեւ ազգասիրական եւ էլի ուրիշ շատ բարձր գաղափարներով տոգորված մի կին։ Մինչ դեռ ես իմ սրտում մի կաթիլ սէր չեմ զգում դէպի իմ ազգը եւ ոչ մի գաղափար էլ չունիմ իսկական ազգասիրութեան մասին։ Բացի ինձանից, ես ոչ ոքին չեմ սիրում եւ իմ բաւականութիւնների սահմանից դուրս ոչինչ չեմ հասկանում։

Բայց թէ ինչ է նպատակս սկզբից մինչեւ հիմա, որ գործունեայ եմ ձեւանում, եռանդով վազում դէս ու դէն, շատ պարզ է. նախ ոչ ոքից յետ չը մնալ, երկրորդ՝ լաւ ժամանակ անցկացնել։

Այնան, երբ մեր երկինքը հաստում էր իր մոխրագոյն մուշտակը եւ սկսում էր անդադար մաղել բարակ անձրեւը, վերջանում էին դրսի զբօսանքները, այդ ժամանակ մենք, ընկերուհիներս, ժողովներ էինք սարքում մեր ծանօթ երիտասարդների հետ ընթերցանութեամբ պարապելու համար։ Սկզբում մենք մեզ խօսք էինք տալիս, լուրջ վերաբերվել դէպի գործը եւ զարգանալ։ Մեզանից իւրաքանչիւրը մի առանձին նախանձով էր յիշում մեր այն ընկերուհիներին, որոնց աջողվել էր գիմնազիան վերջացնել եւ որոնք կարողանում էին ուսանողների հետ վարժ ռուսերէն խօսել։ «Ինչո՞ւ մենք էլ չը սովորենք, չը զարգանանք», մտածում էինք մենք, յետոյ եռանդով ծրագիրներ կազմում, թէ ինչ ուղղութեան գրքեր պէտք է կարդանք եւ ինչպէս պիտի շարունակենք գործը։

Մի երկու շաբաթ հաւաքվում էինք միասին խորհրդակցելու, գրքեր ընտրելու։ Երիտասարդներից մէկը առաջարկում էր քաղաքական տեսութիւն անցնել, ասելով, որ զարգացման միակ ճանապարհը այդ գիտութիւնն է, որովհետեւ դրա մէջ շատ բազմակողմանի կենսական հարցեր են շօշափվում, որոնց իմանալն ամեն մի անհատի համար անհրաժեշտ է։ Մի ուրիշը առաջարկում էր Շեկսպիրի գրքերը ուսումնասիրել եւ այլն, յետոյ էլ թեր էինք ընտրում բեֆերատներ գրելու համար։ Մեզնից ամեն մէկը իր զարգացածութեան եւ ճաշակի համապատասխան թեմա ընտրում բեֆերատի համար։ Մէկը ուզում էր ջղերի եւ ուրիշ սրանց նման բաների մասին խօսելն էր ընտրում։ Մի ուրիշը վերցնում էր պահարզանի հարցը, երրորդը—կանանց իրաւունքների հարցը եւ այլն...

Բայց մինչեւ մեր բեֆերատների լոյս ընծայելը, սիրահարվում էինք եւ ամեն ինչ իր նշանակութիւնը մեր աչքում կորցնում էր։ Նուհետեւ ժողովներում մեր լեզուի փոխարէն սկսում էին խօսել մեր աչքերը... Եւ այսպէս մի ամիս չանցած, ցրվում էինք՝ զոյգերի բաժանված եւ աշխատում այնպէս տեսնվել, որպէս խօսել, որ կողմնակի մարդիկ ոչինչ չը նկատէին։

Մեր միջից որոնց չէր աջողվում սիրվել, նրանք էլ նախանձից դրդված՝ երեւան էին հանում մեր գաղտնիքը եւ ամբողջ քաղաքը կանգնեցնում... Սատանան գիտէ, թէ մեր դիտաւորութեան մասին լսողների երեւակայութիւնը որտեղ էր հասնում... Մինչ դեռ մեր բոլոր յանցանքը կայանում էր միայն մի քանի համբոյրների եւ մի քանի սիրահարական նամակների մէջ։ Ցեռոյ թողնում, հեռանում էին եւ կամաց-կամաց մոռանում, սկսում փնտրել երկրորդը, երրորդը։

(Կը շարունակվի)

կանի սեպտեմբերի 4-ը, որոշեց այդ առաջարկութիւնը ընդունել ի տեղեկութիւն։

—

Կառավարիչ սենատը բացատրեց, որ գիւղական համայնքների վճիռները, որոնցով նրանք կառավարութեան ձեռքն են յանձնում իրանց միջի արատաւոր եւ վնասակար անդամներին, կարող են փոփոխութիւնների ենթարկվել իրանց՝ գիւղական համայնքների նոր համախօսականներով։ Եթէ միայն վերջինները չեն հաստատված արդէն նահանգական ատեանների կողմից։

—

«Новое Время» լրագիրը հեղինակաւոր աղբիւրից տեղեկացել է, որ նահանգական զէմստվոների գործունէութեան դադարեցման մասին տարածված լուրերը բոլորովին սխալ են եւ հնարովի։

—

Յուլիսի 21-ին հրատարակվեցին Պետերբուրգի պոլիտեխնիքական ինստիտուտում կայացած ընդունելութիւնների վերջնական հետեւանքները։ Բոլոր խնդրատուներից, որոնց թիւը, ինչպէս յայտնի է, հասնում էր չորս հազարի, ընդունված են ուսանող՝ մետալուրգիական բաժանմունքում—61 հոգի, էլէքտրո-տեխնիքական բաժանմունքում—63, մտտեսական բաժանմունքում—129 եւ նաւաշինութեան բաժանմունքում—27, ընդամենը 280 հոգի։ Ինստիտուտում սեպտեմբեր ամսից բացվում է հանրակացարան, որտեղ ուսանողները ամսական 30 ռուբլու վճարով կունենան բնակարան, ճաշ, վառելիք, լուսաւորութիւն եւ անկողնի սպիտակեղէն։ Հանրակացարանից դուրս ապրելու իրաւունք ունենալու համար՝ պէտք է թոյլտուութիւն ստանալ ինստիտուտի վարչութիւնից։ Իբրեւ վարձ դասախօսութիւններ լսելու եւ գործնական աշխատանքների՝ ուսանողները կանխիկ վճարում են 50-ական ռուբլի ամեն մի կիսամեակի համար։

—

Երկրագործութեան մինիստրութիւնը հաստատել է Ռոստովի գիւղատնտեսական ընկերակցութեան կանոնադրութիւնը։ Այդ ընկերակցութիւնը կրում է «Զվարա» անունը։

—

«С. П. Вѣд.» լրագրում տպագրված է հետեւեալ խմբագրական նկատողութիւնը. «Գաւառական մի քանի հրատարակութիւնների մէջ վերջին ժամանակ սկսեցին երեւան գալ տեղեկութիւններ, թէ իբր «С. П. Вѣд.» լրագրի կապալի ժամանակամիջոցը լրանում է, լրագիրը անցնում է ուրիշի ձեռք եւ խմբագրութեան կազմը բոլորովին փոխվում է։ Թէպէտեւ այդ լուրերը մեզ համար ոչ մի նշանակութիւն չունեն, բայց մեզ այդ մասին հարցեր առաջարկողներին բաւարարութիւն տալու համար [illegible] ենք յայտնել, որ կապալի ժամանակամիջոցի այժմեան խմբագրութեան համար լրանում է 1907 թւականի վերջում միայն, իսկ մնում է նոյնը, իսկ խմբագրութեան կազմի փոփոխութեան մասին տարածվածները առասպելից զատ ոչ մի ճշմարտութիւն չեն պարունակում իրանց մէջ»։

—

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Ահա մօտ տարի է, որ մենք քաղաքային ինքնավարութիւն ենք ստացել. բայց այդ երկար ժամանակամիջոցում քաղաքի վարչութիւնը չը կարացաւ գոնէ ամենակարեւոր մի կարգ մտցնել քաղաքը ներխուժող ապրանքների համար առանձին տեղ որոշել. այդ նպատակի համար ծառայում են քաղաքի գլխաւոր հրապարակները, ուր յաճախ անցորդը հնարաւորութիւն չէ ունենում ազատ շրջելու, հրապարակների մինչեւ իսկ մայթերը գրաստներով, սայլերով բռնված լինելու պատճառով։ Աւելացնէք դրա վրա եւ Ղարաբաղի հոգեւորականների ականջ խլացնող զոռոցը՝ այն ժամանակը, երբ կը ստացվի մեր Շուշու իսկական պատկերը։ Բացի դրանից, նոյն վարչութիւնը հանձնել է բոլոր խանութների առաջը (փողոցները) ձեռքով է տալիս զանազան մրգավաճառների։ Փողոցներում կեղտոտութիւններ առաջացնելու համար՝ նոյնպէս ոչ պակաս եւ արդարացնում մարդկանց փողոցներով ազատ շրջելը։ Բաւական չէ, որ այդ տեսակ անկանոնութիւնները թոյլ են տալիս, մեր իրաւաբան քաղաքագլուխը յիշեալ տեսակի մրգավաճառներին [illegible] տաւորացրել է, որ իւրաքանչիւր խանութի ամեն օր խանութի առաջը իր հաշուով [illegible] Սա արդէն կեղեքի պէս մի բան է։»

—

ԱՆԽԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Յուլիսի [illegible] գիշերը, ժամի 8-ին, սկսեց այրվել տեղիս [illegible] տի չինութիւնը։ Կրակը, սկսվելով պատ[illegible] բից, շատ արագ անցաւ սենեակներն [illegible] ժամից յետոյ պօստի ամբողջ չինութիւնը [illegible] կի մէջ էր։ Բացի դրամարկղից եւ դրամ[illegible] ծրարներից, ոչինչ չը կարողացան ազատել։ [illegible] լորը կրակի ճարակ դարձաւ։ Տեղիս հրշեջ [illegible] խումբը ցոյց տուեց, թէ դեռ որքան անվարատ է կրակ հանգցնելու։ Հրշէջների [illegible] դան բանալին անգամ չէին գտնում, [illegible] բանալու։ Խումբը չունի ձի, չունի տակառ։ Բռնում էին փողոցում առաջին պատահած ջրկիրի ձին ու տակառը եւ դրանով ջուր [illegible] լով ուզում էին մի ամբողջ այրվող չինութիւն [illegible] կրակի ձեռքից ազատել։ Ցաւալի էր եւ ծիծաղելի։ Կրակը շատ մեծ ծաւալ կընդունէր՝ [illegible]

իրանց սեփական բանն ու գործը, եւ դու կը դառնայիր նրանց զբաղմունքի գլխաւոր առարկան։

Բայց յետոյ հետամուտ եղանք եւ տեսանք, որ ընդհանուրի խօսակցութեանն են ենթարկված եւ լաւերը եւ վատերը։ Մանաւանդ չքաւոր դասակարգի կանայք եւ օրիորդները, որոնց ոչինչ չէր ներվում։ Այս վերջինների ամենամեղ վարմունքը, օրինակի համար, մէկ ծանօթ երիտասարդի հետ փողոցով անցնելը, երկու անգամ իրար վրա տանից դուրս գալը, թէեւ հէնց հարկաւոր գործի համար, համարվում էր ծանր յանցանք։

Հասարակութեան այդ անարդար վարմունքից օգտվելով, մենք ազատ ապարէզ դուրս եկանք եւ առանց քաշվելու անում էինք, ինչ որ սիրտներս ուզում էր։ Ես ազատ դուրս էի գալիս տանից սիրտս ուզածի չափ եւ ընդունում ինձ մօտ ում կը ցանկանայի։ Միայն անձրեւային օրերն էին լինում անտանելի, երբ ոչ կարելի էր տանից դուրս գալ եւ ոչ էլ մէկին սպասել։ Այդպիսի սաստիկ անձրեւային օրերը ես չէի իմանում օրը ինչպէս մթնացնեմ, սիրտս քիչ էր մնում տրաքվի նեղութիւնից, ճարս կտրվում էր՝ գիրք էի կարդում։

Ամեն մի գիրք ինձ դուր չէր գալիս։ Ես սիրում էի բռամանների այն տեսակները, որոնց մէջ սիրոյ տեսարանները նկարագրված էին լինում վառ գոյներով եւ երկար ու բարակ բացատրութիւններով, ինչ չէր պատահում, երբ կարդալու միջոցին, յանկարծ սիրոյ տեսարանները ընդհատվում էին վերացական, անհետաքրքիր դատողութիւններով եւ հերոսը իր հերոսուհու հետ անյայտանում էին աչքից, ես էլ նրանց իսկոյն գտնում էի ոչ թէ կարդալով, այլ թերթելով։

Ես միշտ գրքերից արտագրում էի գեղեցիկ ֆրազներ եւ անգիր սովորում նրանց, տեղին յարմար գործածելու համար, այնպէս ձր ես

քամի լինէր եւ եթէ զօրքերը ուշ հասնէին։ Վերջիններս գալով, սկսեցին քանդել այրվող սենեակների հարեւան սենեակները եւ դրանով միայն կարողացան կրակի առաջը առնել։ Պօսմիայն կարողացան դէմ ու դէմ է. չը նայելով որ քամի բոլորովին չը կար, բայց էլի կայծերը թռչելով ընկնում էին բաւական հեռու կայծերից ընկան մաքսատան բամբակի հաներից մէկի վրա, որը սկսեց այրվել, սակայն չուտով հանգցրին։ Ցաւալի էր տեսնել, թէ ինչպէս պօստի ծառայողների ինչքը թափված էր փողոցում, ուր իրանք եւ երեխաները պատուոր էին անցկացնել գիշերը։ Տունը ապահովագրված է 35 հազար ռուբլով»։

—

ՇՈՒՇՈՒԻՑ մեզ գրում են. «Շուշի է եկել պ. Դեւերեանը, որ երկու սեռի երիտասարդներից խումբ է կազմում համերգ տալու. նա էլ ոգեւորված է իր գործով եւ աշխատում է, որ Կարա-Մուրզայի ստեղծածը չը կորչի։ Պարոն Դեւերեանցին իննսուն չորս թուականից ենք ճանաչում, երբ ուսուցիչ էր թեմական դպրոցում, եւ չենք մոռանում նրա կազմած քառաձայն երգեցիկ խումբը, եւ հէնց այդ պատճառով է, որ իւրաքանչիւր նրան ճանաչող ցանկանում է, որ նա այս տարի մեզ մօտ ուսուցիչ մնայ։ Մի խումբ երիտասարդներ պատրաստվում են հանգուցեալ Կարա-Մուրզայի աշխատութիւնները հրատարակելու գործի համար մի ներկայացում տալու»։

—

ՇՈՒՇՈՒԻՑ մեզ գրում են. «Խանքենդ աւանի ծխատէր Պետրոս քահանայ Տէր-Յովհաննիսեանին տեղիս կոնսիստորիան նախ փիլոնազուրկ է արել եւ ապա դիմելով էջմիածնի սինոդին, վերջինս հրամանով անորոշ ժամանակով կարգալոյծ է արել ու հեռացրել քահանայագործութիւնից, ծուխը յանձնելով մի ուրիշ քահանայի առ ժամանակ կառավարելու համար. սակայն ծուխը եւ քաղաքացիներից մի քանիսը այդ մասին բողոքել են Վեհափառ Կաթողիկոսին, որովհետեւ այդ քահանայի յանցանքը անհամապատասխան է մի այդպիսի ծանր պատժի»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՎԱՆՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ

—Երուսաղէմի միաբանութիւնը երկու չաբաթ առաջ վերջապէս գումարեր է իր ընդհանուր ժողովը։ Տարիներէ, ամիսներէ ի վեր սպասուած ժողովն էր այս, որ հազիւ այս անգամ տեղի ունեցեր է, բայց դժբաղդաբար ո եւ է արդիւնք չէ ունեցեր ու կարգ մը խօսքերէ ու տաք վիճաբանութիւններէ յետոյ ցրուեր է, որովհետեւ մինչդեռ ամեն ոք կը սպասէր, թէ այս նիստին մէջ վանքին հաշիւները պիտի ներկայացուէին, ամենեւին ասոնց խօսքը չէ եղեր, այլ պահանջուեր է, որ նոր տնօրէն ժողով մը կազմուի։ Ներկայ միաբանները ուզեր են իմանալ թէ հին տնօրէն ժողովը ինչ ըրեր է, վանքին նիւթական վիճակը որ տեղուանքն է։ Կարգ մը հացկատակներ վանքը յաջողութեան գագաթնակէտը հասած կը ներկայացնեն. ուրիշներ տակնուվրայ պարտք ունի կըսեն. վերջապէս որն է ասոնց ճիշդը։ Ինչ կուզէք որ ըսուի այս արդար եւ ճիշդ դիտողութիւններուն հանդէպ։ Միւք մի հարցնէք ատոնք, տնօրէն ժողովը ընտրենիք նայեցէք». ասոր վրայ աղմուկը սկսեր, եւ առանց արդիւնքի ժողովը ցրուեր է։ Մեզի համար տարօրինակ բան մը չկայ ասոնց մէջ։ Երբ քանի մը անգամ այս հաշուական խնդիրը յուզեցինք, երուսաղէմագէտներ կամ ամենագէտ անձեր մեզի պատասխանեցին եւ մինչեւ իսկ հրապարակաւ գրեցին, թէ ատոնք անհիմն խօսքեր են, անձնական նկատումներու արդիւնք, եւ թէ հաշիւները կանոնաւորապէս պատրաստուած ու յանձնուած են Տ. Յարութիւն պատրիարքին, որ միաբանական յառաջիկայ ժողովին պիտի ներկայացնէ։ Անուասիկ այդ ժողովը գումարուեցաւ, բայց հաշիւ եւայլն. չը կայ մէջտեղ, ուր մնացին ուրեմն այդ հաշիւները, մի գուցէ Յովսափատու ձորին կամ Յորդանան գետին մէջ կորսուած ըլլան. ուր են Երուսաղէմի հաշուական կանոնաւորութեան ներքողը կարդացող միամիտները, ինչ պիտի ըսեն այս անգամուան բողոքին, որ Սուրհանդակէն չի գար այլ նոյն իսկ միաբաններէն, այն միաբաններէն, որոնք Լատինացւոց եւ Յունաց վանքին չեն վերաբերիր, այլ Ս. Յակոբեանց միաբանութեան, որուն անունը շահագործելով նիւթապէս օգտուեր են երմտից տեսուչը եւ իր նմանները։ Հարկաւ իրենք ըսելիք չունեն այլ եւս, ուստի թող ներեն որ բաւական լռութենէ յետոյ մենք խօսինք դարձեալ այս արդիւնքին վրայ։ Ս. Յակոբեանց միաբանութեան ներքին կանոնագիրը այնպէս քմածին կերպով կամ ըստ բաղդի պատրաստուած բան մը չէ, աւելի մեծ մարմիններու օրէնքները ու կանոնները առաջնորդ բռնուած են։ Մարմին մը, միաբանութիւն մը իր գործառնութիւնները կուզէ կը հրատարակէ, կուզէ գաղտնի կը պահէ. բայց անոնց արդիւնքին ու հետեւանքին վրայ անպատճառ պէտք է տեղեկութիւն տայ իր ներքին անդամներուն, որոնք չահակից են այդ գործին մէջ. հակառակը անվստահութիւն կը նշանակէ, եւ անվստահելի տարրերը անմիջապէս պէտք է որոշել եւ վտարել նոյն մարմինէն, ինչպէս շատ անգամ ըրած է Երուսաղէմի միաբանութիւնը։

—Մեր երկրին մէջ այսքան դրամատուներ եւ զանազան ընկերութիւններ կան. ասոնց գործերը վարչական ժողովները կը վարեն. սակայն երբ տարին անգամ մը բաժնետէրերու ժողով գումարուի, վարչական ժողովոյ ընտրութենէ առաջ հաշիւները կը ներկայացուին, հաշուեքննիչներու կը յանձնուին եւ գործերու վիճակին վրայ կարծիքներ կը յայտնուին, տեսութիւններ կը պարզուին, ու յետոյ կընտրուի նոր վարչական ժողովը, որ անմիջապէս նկատողութեան կառնէ այդ կարծիքները եւ տեսութիւնները։ Երուսաղէմի միաբանութիւնն ալ կուզէր այսպէս ընել, սակայն իրմէ կոյր հնազանդութեան հետ, կոյր վստահութիւն ալ կը պահանջուի. թուանշանի խօսք ընել մեղք կը համարուի, սակայն իրենց պարտքին եւ իրաւունքին վրա գաղափար ունեցող միաբանները կը բողոքեն ասոր դէմ բաւական զօրաւոր ձայնով։ Այս արդիւնքը դատապարտութիւնն է կարգ մը մարդոց եւ իրենց հաշկատակներուն. ուստի մեզի ուրիշ խօսելիք չի մնար։ Կը ցաւինք որ գործերը մինչեւ այս տեղ բերին, ի մեծ ցաւ Տ. Յարութիւն ս. պատրիարքի հայրական սրտին, որ այս անմիաբանութիւնը նպաստաւոր չի տեսներ հարկաւ վանքին ներկային եւ ապագային համար։ Ոմանք կրսեն թէ գուցէ երմտից տեսուչը առնէ քալէ վանքէն այս դըժգոհութեան վրա, եւ ասկէ երկու չարիք յառաջ պիտի գայ. նախ վանքը պիտի զրկուի Ղեւոնդ վարդապետի մեծագումար հարստութենէն, որ իր պարագաներուն պիտի մնայ օր մը փոխանակ վանքին մնալու, եւ երկրորդ որ վանքին մատակարարութիւնը պիտի խանգարուի։ Ասոնք կրնան ըլլալ, բայց պատասխանատուն մենք չենք, այլ անոնք որ վանքին երմտական գործերուն չընտելացուցին յաջողակ միաբաններէ ոմանք. եւ երբ Տրդատ եպիսկոպոսի պէս աչքաբաց մարդու մը ալ պատահեցան, ժամ առաջ վանքէն դուրս նետելու ճարը մտածեցին։ Վանքին ազդեցիկ միաբանները կամ տնօրէն ժողովականներ պատկերներ կը գծեն, ձեռագիրներու ցուցակ կը կազմեն կամ կը քննանն. ասոնց երեքն ալ վնասակար գործեր չեն, սակայն վանքին ներկան ու ապագան ով պիտի խորհի. եւ այս միջոցին վանքին վարկը չահագործողները չահագործեցին, եւ իրենց բեռը կապեցին ու իբրեւ ճարպիկ մարդ հոչակ ալ հանեցին։ Իրաւ է որ եթէ Ղեւոնդ վարդապետ այսօր հեռանայ վանքէն, մեծ ճգնաժամ մը պիտի անցընէ միաբանութիւնը, ոչ անոր համար որ անմրցելի կարողութեան տէր մէկն է այն, այլ անոր համար որ բոլոր գործը իր ձեռքը կենդրոնացուցած է. եւ անոնք որ այս վիճակին առջեւ անտարբեր դտնուած են, հարկաւ պիտի շուարին եւ բաւական ալ պիտի տուժեն։ Անցածին վրայ խորհիլ այլ եւս անօգուտ է, առաջիկային համար լուրջ ջանքեր պէտք են։

«Սուրհանդակ»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ինչպէս հաղորդում է «Information» լրագիրը, Սկոպիայում, ինչպէս նաեւ Սալոնիկում եւ Բելգրադում, եռանդով աշխատում են հիմնել սերբական մի մեծ ընկերութիւն «Pro Macedonia» անունով, որ իւրաքանչիւր օր վիճակագրական տեղեկութիւններ հաւաքէր այն ոճրագործութիւնների եւ բռնութիւնների մասին, որ կատարում են թիւրքերն եւ առնաւտները Մակեդոնիայի եւ Հին-Սերբիայի անպաշտպան ազգաբնակութեան բնակավայրերում—թէ գիւղերում եւ թէ քաղաքներում։ Ապա այդ վիճակագրական տեղեկութիւնները, յիշատակագրի ձեւով, կը ներկայացնվեն եւրոպական պետութիւնների ներկայացուցիչներին։ «Գուցէ Եւրոպան,—ասում է «Information», — վերջապէս զգայ, որ անհրաժեշտ է պաշտպանել ոչ միայն խօսքով, այլ եւ գործով հարիւրաւոր եւ հազարաւոր անբաղդ քրիստոնեաներին, որոնց բռնաբարում են, սպանում եւ կողոպտում եւրոպական քաղաքակրթութեան սահմանի վրա, այսպէս ասած, Եւրոպայի դիպլոմատիական ներկայացուցիչների աչքի առաջ»։

—«Մէյվէրէտ» լրագրին գրում են Կ. Պոլսից, թէ խեդիվ Աբբաս-Հիլմի փաշայի անձնական բանակցութիւնները սուլթանի հետ Թասոս կղզուց թիւրքական զօրքերը հեռացնելու մասին ոչ մի հետեւանք չունեցան։ Եգիպտոսի գերիշխանութեան տակ գտնվող կղզին քիչ ժամանակ առաջ գրաւվեց թիւրքական զօրքերից՝ այնտեղ կարգ ու կանոն սահմանելու պատրուակով։ Սուլթանը խոստացաւ հեռացնել թիւրքական զօրքերը Թասոսից միայն այն դէպքում, եթէ խեդիվը կարգելէ երիտասարդթիւրքերի կուսակցութեան պատկանողներին ապրել եգիպտական հողի վրա։ Այս պայմանը Աբբաս-Հիլմի փաշան չէր կարող ընդունել, որովհետեւ նա կախումն ունի Անգլիայից։ Կ. Պոլսի Մեծ-Բրիտանական դեսպան սէր Օ'Կոնոր դիմեց Բ. Դրան մի յայտագրով, որի մէջ սպառնում է ոյժ գործ դնել, եթէ Թասոսը չուտով չը յանձնվի Եգիպտոսին։

—Անգլիական համայնքների ժողովում մօտ օրերումս չոչափվեց պարսկական հարցը։ Պատգամաւոր Ջիբսոն Բոուլդ ցանկացաւ իմանալ, թէ 1) յայտնի է արդեօք կառավարութեան, որ ռուսաց հիւպատոսը հեռեր է գնել Բարէֆն կըղզու վրա, Պարսից ծոցում, եւ 2) օգուտ կը քաղէ արդեօք կառավարութիւնը Շահի առաջիկայ այցելութիւնից դէպի Լօնդոն, որպէս զի, Պարսկաստանում ընդհարումներից խուսափելու համար, համաձայնութիւն կապէ նրա եւ ռուսաց կառավարութեան հետ այն միջոցների մասին որ անհրաժեշտ է ձեռք առնել Պարսկաստանի անկախութիւնն եւ անձեռնմխելիութիւնը ապահովելու համար եւ, իբրեւ վաւերացումն այս համաձայնութեան, արդեօք կառավարութիւնը դաշնագիր կը կապէ Պարսկաստանի հետ։ Առաջին հարցին լորդ Կրանբօրն պատասխանեց բացասական կերպով։ Ինչ վերաբերում է երկրորդին, նա յոյս յայտնեց, որ համայնքների ժողովը չի պահանջի նրանից ներկայ րոպէում բացատրութիւններ այնպիսի հարցերի մասին, որոնք գուցէ բանակցութիւնների նիւթ կազմեն Շահի Լօնդոնում եղած ժամանակ։

—Գերմանական լրագիրները հաղորդում են, թէ Վիրխովի առողջութիւնը, որ վտանգաւոր կերպով հիւանդացել էր, փոքր առ փոքր լաւանում է, թէպէտ եւ նա սենեակից դուրս չէ գալիս։ Հոկտեմբեր ամսին Վիրխով մտադիր է վերադառնալ Բերլին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

25 յուլիսի

ԿԻԼ։ Պրինց Հէնրիխ իր ամուսնու հետ ճանապարհ ընկաւ առաւօտեան Անգլիա ներկայ լինելու թագադրութեան։

ԼՕՆԴՕՆ։ Բիւլլրտէն։ «Թագաւորը դիմացաւ երէկվայ ճանապարհորդութեան դէպի Անգլիա առանց ամենափոքր յոգնածութեան։ Նրա առողջական դրութիւնը շատ լաւ է։ Վէրքը համարեա փակվել է»։

ՐԷՎԷԼ։ Երէկ, ժամի 8-ին երեկոյեան, «Հօհէնցհօլլէրնի» վրա, տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշ։ Գերմանական կայսրը իր դրագունեան՝ Նարվեան գնդի համազգեստով ողջունեց թագաւոր Կայսրին, որ գերմանական ծովային համազգեստով էր, մուտքի սանդուղքի մօտ։ Ճաշկերոյթի ժամանակ թագաւոր Կայսրի ձախ կողմում նստած էր գերմանական կայսրը, աջ կողմը—կանցլէր Բիւլօվ, Նոցա Մեծութիւնների հանդէպ-օբէրհոֆմարշալ կոմս Էյլէնբուրգ, նրա ձախակողմում—արքունի պալատի մինիստր Ֆրէդերիկս, աջակողմում—կոմս Լամզդորֆ։ Ճաշից առաջ Ռէվէլի գերմանական հիւպատոս Կօխ մատուցեց գերմանական կայսրին այստեղի գերմանական գաղութի կողմից մի չքեղ ալբօմ Ռէվէլի տեսարաններով եւ ուղերձ։ Կայսրը հետաքրքրվեց մի քանի տեսարաններով, շնորհակալութիւն յայտնեց հիւպատոսին եւ իր ձեռքով տուեց նրան չքանչան։ Ճաշից յետոյ երկու Կայսրները զբօսնում էին նաւի տախտակամածի վրա։ Երեկոյեան 10 ժամին մօտ վառվեց էլէքտրական չքեղ հրավառութիւն նաւերի վրա։ Ժամի 10-ից յետոյ Կայսրները մեկնեցին դէպի «Штандартъ» զբօսանաւը եւ ներկայ եղան արտիլերիայի թնդանօթաձգութեան դէպի պրոժէկտորներով լուսաւորված վահանները։ Ժամի 11½-ին մօտ գերմանական կայսրը վերադարձաւ «Հօհէնցհօլլէրն»-ի վրա։ Այսօր, առաւօտեան 8 ժամին, Կայսրները ներկայ էին «Мининъ» չոգենաւի վրա թնդանօթաձիգների մարզանքներին եւ հրաձգութեանը՝ ամեն տեսակ մեծութիւն ունեցող թնդանօթներից, որոնք իրանց հարուածներն ուղղել էին դէպի ծովափնեայ լողացող վահանները եւ Կարլոս կղզու վրա շինված հողաթմբերը։

ԼՕՆԴՕՆ։ «Times»-ի ստացած տեղեկութիւններով Շանգհայից՝ ամերիկական գործակալ Շարրիսս հաղորդեց քիչ ժամանակ առաջ Նանկինի փոխարքային, թէ ամերիկական կառավարութիւնը յանձն չի առնի այն պարտաւորութիւնները, որոնք ձեւակերպված են անգլո-չինական դաշնագրի 8-րդ յօդուածում՝ «լիկին» կոչված տուրքի վերացման մասին։

ԲԷԼԳՐԱԴ։ Պատգամաւորների ժողովը փակված է մինչեւ հոկտեմբերի 31-ը։

ՐԷՎԷԼ։ Ժամի 2-ին եւ 30 րոպէին սկսվեց նաւերի վրա գտնվող զօրքի տեղափոխութիւնը դէպի Կարլոս կղզին եւ թնդանօթաձգութիւն ռազմական նաւերից։ Ժամի 3-ին Նոցա Մեծութիւնները չոգեմակոյկով եկան Կարլոս կղզին եւ ներկայ եղան հրաձգութեանը։ Նոցա Մեծութիւնները ժամի 5½-ին չոգեմակոյկով գընացին դէպի «Շտանդարտ» նաւը։

26 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստրը որոշեց յայտնել «Хозяинъ» չաբաթաթերթին առաջին նախազգուշութիւն № 29-ում տպագրված «Օրվայ չարիքը» յօդուածի համար։

Խոլերայի կողմից անբարեյաջող են ճանաչված ամբողջ Եգիպտոսը յուլիսի 16-ից եւ Նագասակի քաղաքը յուլիսի 24-ից։

Յուլիսի 24-ին Մոսկվա մեկնեց Մոսկվայի գեներալ-նահանգապետ Մեծ-Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչ իր Ամուսնու հետ։

«Правительственный Вѣстникъ»-ում տպագրված է Բարձրագոյն հաստատութիւնը այն նախագծի, որ մշակել է ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ հիմնված մասնաժողովը՝ գիմնազիաներում, պրոգիմնազիաներում եւ ըէալական դպրոցներում ուսումնական գործը կազմակերպելու մասին 1902—1913 ուսումնական տարվայ ընթացքում։

ԼՕՆԴՕՆ։ Ժողովրդին ուղղած հրովարտակի մէջ թագաւորը՝ թագադրութիւնից, որպէս իր կեանքի ամենանշանաւոր դէպքից, առաջ սրտագին շնորհակալութիւն է յայտնում ժողովրդին, գաղթականութիւնների եւ Հնդկաստանի ազգաբնակութեան այն համակրանքի համար, որ ցոյց տրվեց նրա կեանքին վտանգ սպառնացող հիւանդութեան ժամանակ եւ զարմանքի արժանի համբերութեան համար, որով նրանք տարան թագադրութեան յետաձգումից առաջացած անյարմարութիւններն եւ անհաճոյ դէպքերը։ Թագաւորը գոհութիւն է յայտնում Նախախնամութեան. որ երկարացրեց նրա կեանքը եւ ոյժ տուեց նրան կատարելու բրիտանական մեծ պետութեան վեհապետի նըշանաւոր պարտականութիւնները։

ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ։ Այստեղ երեւաց խոլերա. մինչեւ այժմ տեղի են ունեցել հիւանդանալու հինգ դէպքեր, որոնցից 4-ը վերջացել են մահով։

ԲԵԼԳՐԱԴ։ Սենատում մինիստր-նախագահը յայտնեց, թէ կառավարութիւնը հաճութեամբ միանում է Հապագայի խաղաղութեան կոնֆերենցիայի եղրակացութիւններին եւ աշխատանքը տաշրջանի ժամանակ կը ներկայացնէ նրանց պարլամէնտի հաստատութեան։ Պատգամաւորների ժողովի այսօրվայ նիստում պատգամաւորները միաձայն հրաժարվեցին իրանց հասանելի դրամական վարձատրութիւնից, որովհետեւ ժողովը այս անգամ յետաձգված է եւ ոչ թէ փակված։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԿԱՐՍ, Ն. Կ.—Հասցէն մեզ յայտնի չէ. կարդարեցէք յետ ստանալ ձեր ուղարկած մարկաները։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՊԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, ֆակագծում Թիֆլիսի հաշուով)

Ելագ գնացք Թիֆլիսից—Բագու շաբաթը մէկ անգամ ուրբաթ օրերը դուրս է գալիս առաւօտեան 10 ժամ 15 րոպ. (11 ժ. 49 ր.), հասնում է Բագու գիշերվայ 12 ժամ 11 ր. (1 ժ. 9 րոպէին)։

Ելագ գնացք Բագուից—Թիֆլիս դուրս է գալիս ուրբաթ օրերը գիշերվայ 12 ժամ 52 րոպէ (1 ժ. 50 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 2 ժ. 45 ր. (3 ժ. 43 ր.)։

Ելագ գնացք Թիֆլիսից—Բաթում ամեն օր դուրս է գալիս առաւօտեան 6 ժ. 45 ր. (7 ժ. 43 ր.) հասնում է Բաթում երեկոյեան 5 ժ. 2 ր. (6 ժ.)։

Ելագ գնացք Բաթումից—Թիֆլիս ամեն օր դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 9 ժ. 4 ր. (10 ժ. 2 ր.)։

Գօտեւորաբ գնացք Բագուից դուրս է գալիս երեկոյեան 9 ժ. 22 ր. (10 ժ. 20 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 3 ժ. 56 ր. (4 ժ. 54 ր.), դուրս է գալիս

Թիֆլիսից երեկոյեան 5 ժ. 9 ր. (6 ժ. 7 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 5 ժ. 40 ր. (6 ժամ 38 րոպէին)։

Մարդատար գնացքը Բագուից դուրս է գալիս ցերեկվայ 2 ժ. 27 ր. (3 ժ. 25 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 7 ժ. 39 ր. (8 ժ. 37 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 8 ժ. 29 ր. (9 ժ. 27 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 8 ժ. 30 ր. (9 ժ. 28 ր.)։

Փոստատար գնացքը Բաթումից դուրս է գալիս գիշերվայ 11 ժ. 5 ր. (12 ժ. 3 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 11 ժ. 34 ր. (12 ժ. 32 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 12 ժ. 36 ր. (1 ժ. 34 ր.), հասնում է Բագու առաւօտեան 6 ժ. 16 ր. (7 ժ. 14 ր.)։

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 7 ժ. 5 ր. (8 ժ. 3 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 6 ժ. 39 ր. (7 ժ. 37 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 7 ժ. 24 ր. (8 ժ. 22 ր.), հասնում է Բագու ցերեկվայ 12 ժ. 5 ր. (1 ժ. 3 ր.)։

Փոստատար գնացք դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Կարս երեկոյեան 8 ժ. 30 ր. (9 ժ. 28 ր.). հասնում է Սանահին 1 ժ. 35 ր. (2 ժ. 33 ր.), Ղարաքիլիսա գիշերվայ 3 ժ. 32 ր. (4 ժ. 30 ր.), Ալէքսանդրոպոլ առաւօտեան 7 ժ. 17 ր. (8 ժ. 15 ր.), Կարս ցերեկվայ 11 ժ. 1. (11 ժ. 59)։

Փոստատար գնացք Կարսից դուրս է գալիս ցերեկվայ 4 ժ. 57 ր. (5 ժ. 55 ր.), հասնում է Ալէքսանդրոպոլ երեկոյեան 8 ժ. 5 ր. (9 ժ. 3 ր.), Ղարաքիլիսա 11 ժ. 42 ր. (12 ժ. 40 ր.), Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 20 ր. (7 ժ. 18 ր.)։

Բաւն գնացք Թիֆլիսից դուրս է գալիս ցերեկվայ 2 ժ. 15 ր. (3 ժ. 13 ր.), հասնում է Ղարաքիլիսա 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.) Ալէքսանդրոպոլ գիշերվայ 1 ժ. 25 ր. (2 ժ. 23 ր.)։

Բաւն գնացք Ալէքսանդրոպոլից դուրս է գալիս առաւօտեան 5 ժ. 25 ր. (6 ժ. 23 ր.), հասնում է Ղարաքիլիսա առաւօտեան 8 ժ. 35 ր. (9 ժ. 33 ր.) և Թիֆլիս ցերեկվայ 3 ժ. 37 ր. (4 ժ. 35 րոպէին)։

ՀԱՐԱՒԱՏՅԻՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ
ՊԱՐՍԻՑ ԾՈՎԻ
ԶԷՅԹՈՒՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԲՈՒՇԻՐՈՒՄ
(Հիմնված 25 տարուց ի վեր)

Հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ Պարսից ծոցի առեւտուրի մասին, ունի ներկայացուցիչներ հարաւային Պարսկաստանի ն անաւոր կենտրոններում, ընդունում է յանձնարարութիւններ, գնում եւ վաճառում է ապրանքներ, փոխադրում է Եւրոպայից Պարսկաստան եւ Պարսկաստանից Եւրոպա, դիւրամատչելի պայմաններով.—Հասցէն. Zeytoon C. G. Buchire Persian-Gulf. 36—100

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻԻԱՆԴԱՆՈՑ
Բ. ԴԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր. բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. Նազարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Ե. Ի. Գզելիև—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Թարխանեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Գ. Ա. Թարխանեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ե. Ի. Գզելիև—6—7 ժ.
Գ. Ա. Թարխանեանց—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նազարդեան—7½—8 ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. Առվանիսեանի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈԴԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՎԱՐԶՈՒԹԻՒՆԸ սրանով յայտարարում է, որ նորեկ աշակերտների քննութիւնները սկսվելու են օգոստոսի 26-ին։ Նորեկ աշակերտները պարտաւոր են ներկայացնել ծննդեան վկայական (իսկական եւ ոչ քաղուածք) եւ ծաղկի պատուաստման վկայական։ Առանց վկայականների նորեկ աշակերտները քննութեան չեն ենթարկվի։
3—3 Տեսուչ՝ Ս. Բալաղեան

Լոյս տեսաւ
ԼԷՕ
ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՐՂՈՒԹԵԱՆ
Կենսագրական-պատմական տեսութիւն
Զորս պատկերով (Յովսէփ կաթ. Արղութեան, Կայսրուհի Եկատերինա II, իշխան Գ. Պոտեմկին, կոմս Յովհաննէս Լազարեան)։
ԳԻՆՆ Է 60 ԿՕՊԷԿ
Ծախվում է «Մշակի» խմբագրատանը։ Հասցէն. Тифлисъ, редакція газ. «Мшакъ».

БУХГАЛТЕРСКІЕ КЛАССЫ,
учр. **И. Я. Бронъ-фонъ-Бреннеромъ.**

Въ прошломъ году **ОКОНЧИЛО** курсъ **106**: женкаго пола 43 и мужскаго пола—**63**. При классахъ имѣется **библіотека· товаро-технол. музей** и **бюро** для исполненія практическихъ работъ.
полнееія практическихъ работъ.

Въ настоящемъ году для чтенія лекцій приглашены лучшіе спеціалисты, именно: инж. *М. И. Ченгеры*, инж. *Г. Я. Дюковъ*, юристъ *В. А. Москаловъ*, засл. пр. *П. С. Левицкій*, препод. ср. уч. зав. *Э. К. Ліозенъ*, *Ю. Ф. Гурмлинъ*, *С. Е. Козловъ* и др.

Обязат. предметы классовъ:
бухгалтерія, банковое дѣло, коммерческая ариѳметика, ариѳметика на счетахъ, технологія, товаровѣдѣніе, корреспонденція, каллиграфія, торговлезнаніе, торговые законы и **для желающихъ**: иностр. языки стенографія, упражненія на пишущей машинѣ.

По окончаніи выдаются **АТТЕСТАТЫ** и лучшимъ учащимся предоставляются **мѣста службы**.

Плата за весь курсъ 60 руб. Курсъ продолжается 5 мѣс. при ежевечернихъ, съ 5-ти до 8-ми ч. веч. занятіяхъ. Принимаются лица ОБОЕГО ПОЛА.

Программы и условія поступленія выдаются безплатно въ канцеляріи классовъ, **Николаевская, 88**, съ 9 до 1 ч. и съ 5 до 8 ч. веч.

Начало занятій съ 10 го сентября. Число вакансій **ограниченное**. Двѣ **безплатныя** вакансія свободны.

Учредитель классовъ *И. Бронъ-фонъ-Бреннеръ*
Квартира: Михайловскій пр., № 71. 4—15

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ
վաճառվում են հետեւեալ բառարանների սակաւաթիւ օրինակները

ԲԱՌԱՐԱՆ «Առձեռն Հայկազեան լեզուի», կազմած, գինն է 4 ր. 50 կ.
» «Հայերէն-Ռուսերէն», երկու հատորով, Ա. Խուդաբաշեանի, կազմած, գ. 10 ր.
» «Պատկերազարդ գործնական գիտութեանց», հ, Ս. Երեմեանի, կազմ., գ. 6 ր. 50 կ.
» «Գերմաներէն-Հայերէն», հ. Աւ. վ. Կոյլաւի » գ. 6 ր. 50 կ.
» «Հայերէն-Գաղիերէն», Կ. Ոսկեանի, կազմած, գ. 3 ր.
» «Հայերէն-Անգլիերէն», հ. Մ. վ. Պետրոսեանի, կազմած, գ. 8 ր. 50 կ.
» «Անգլիերէն-Հայերէն», Ե. վ. Աւգերեանի, կազմած, գ. 10 ր.
» «Գաղիերէն-Հայերէն-Տաճկերէն», Ե. վ. Աւգերեանի, կազմած, գ. 7 ր. 50 կ.
» «Ախտանուանց, Ֆրանսերէնէ ի հայ», Ն. Տաղաւարեանի, կազմած, գ. 40 կ.
» «Հայերէնից-Ռուսերէն», Կ. Եաղուբեանի, կազմած, 2 ր. 40 կ.
» «Ռուսերէնից-Հայերէն», Ե. Արաբ., կազմած, գ. 45 կ.
» «Գրպանի, Ռուսերէնից-անգլիերէն եւ Անգլիերէնից ռուսերէն», կազմած, գ. 5 ր.

Գրախանութը ամեն մի նոր լոյս տեսած գիրք ձեռք է բերում իսկոյն։ Ցանկացողներին գրքերը կազմված կուղարկվեն՝ եթէ կազմերի արժէքը կանխիկ կը ստացվեն։ Գրախանութը վաճառելու համար ընդունում է ամեն տեսակ գրքեր, պատկերներ, ալբոմներ եւ այլն։

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «ГУТТЕНБЕРГЪ». Г. Галустяну, Лорисъ-Меликовская ул. № 11. 3—3

ГЛАВНОЕ КАВКАЗСКОЕ АГЕН
ВО ОБЩЕСТВА ГРАММОФОНЪ
РОССІИ
(**Тифлисъ,** Головинскій проспектъ, домъ Аб

Предлагаетъ почтеннѣйшей публикѣ Граммофоны, самые усовершенствованные, по шевленнымъ цѣнамъ, а также безшумныя пластинки нъ нимъ, исполненныя на **ГРУЗИНСКОМЪ** и **ТАТАРСКОМЪ** языкахъ.

Кромѣ означенныхъ пластинокъ Главное Кавказское Агентство Общества Граммофо Россіи имѣетъ въ продажѣ громадный выборъ неподражаемыхъ безшумныхъ пластинокъ полненныхъ самыми лучшими, самыми знаменитыми артистами и артистками Русской Импер ской оперы Московскихъ и Петербургскихъ театровъ, съ которыми интересно познакомиться резъ усовершенствованный граммофонъ преимущественно той части публики, которая обит въ предѣлахъ отдаленной Сибири, Китая, Монголіи, Манчжуріи, Тибета, Персіи, Индіи, Аф стана, Белужистана и другихъ государствъ, и которая, такимъ образомъ, не имѣетъ во ности лично слышать восхитительное пѣніе и музыку артистовъ.

ИЗЪ ИСПОЛНИТЕЛЕЙ Агентство особенно рекомендуетъ слѣдующихъ артис Ф. ШАЛЯПИНА, Д. Южина, Д. Собинова, Н. Фигнеръ, М. Михайлову, Л. Брагину, Р. Бер А. Давыдова, Г. Морскаго. Н. Ростовскаго, И. Никитина, Н. Шевелева, К. Серебряков Бухтоярова, Н. Сѣверскаго, г-жу Медею Мей Фигнеръ, М. Вольфъ-Израэля, А. Цибе Гоппъ, О. Больма. С. Морозова, Знаменитую исполнительницу цыганскихъ романсовъ А. цеву, Р. Раисову, Н. Тамара, А. Сивачева, дуэтистовъ Романченко, ПЕТРА ЕМЕЛЬЯН НЕВСКАГО.

ТРЕБУЙТЕ КАТАЛОГИ
ГЛАВНОЕ КАВКАЗСКОЕ АГЕНТСТВО ОБЩЕСТВА ГРАММОФОНЪ ВЪ РОСС
1—10

Տպագրվում է եւ մինչեւ յուլիսի վերջը լոյս կը տեսնէ
ԼԷՕ
ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ
Մանրամասն կենսագրութիւն, լուսաբանված գրական-պատմական տեսութիւններով.
Երկուհատոր, մօտ 650 երես, բազմաթիւ (25-ից աւելի) պատկերներով (Նազարեանց եւ նրա մանակակիցները, „Հիւսիսափայլի“ գլխաւոր աշխատակիցները, Նազարեանցի ֆակսիմիլէն, գերեզմանը, սիսափայլի“ խմբագրատունը)։
Մինչեւ տպագրութեան վերջանալը բացվում է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ։
Բաժանորդագին է 1 ՐՈՒԲԼԻ, իսկ ճանապարհածախսով 1 ՐՈՒԲԼԻ 35 ԿՕՊԷԿ։
Լոյս տեսնելուց յետոյ գինը կը բարձրացնվի։
ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ԲԱԺԱՆՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈ
ՆԵՐԻՆ
Վերադիր վճարով բաժանորդագրութիւն չէ ընդունվում։
Բաժանորդագրութիւնը ԹԻՖԼԻՍՈՒՄ ընդունվում է «Մշակի» խմբագրատանը եւ «Ռ տենբէրգ» գրավաճառանոցներում։ ԲԱԳԻՈՒՄ առանց ճանապարհածախսի բաժանորդագրու ընդունվում է Սամսոն Յարութիւնեանի գրավաճառանոցում։ Միւս քաղաքներից դիմում Тифлисъ. Редакція „Мшакъ“.

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում
վաճառվում են՝

ԼԷՕ, Ստեփանոս Նազարեանց, ա. հատոր, 6 պատկերով, չուտով կը լինի բ. հատորը, հատորի գինն է 1 ր. 50 կ., Թիֆլիս, 1902 թ.
ԲՈՒԴՈՒՂԵԱՆ Ա. բժ., Երիտասարդութիւն եւ Ծերութիւն, Պետերբուրգ, 1902 թ., գ. 15 Ծախվում են նաեւ նրա միւս գրքոյկները։
ԲԵԶՕԲՐԱԶՈՎ Պ., Կանանց ներկայ դրութեան մասին, Բագու, 1902 թ., գ. 15 կ.
ՄԽԻԹԱՐԵԱՆ Ա-ի թարգ. թուրք., Դանար-Միրզի եւ Զօնրա-Խանումի հէքիաթը, Ալէքսանդ 1001 թ., գ. 30 կ.
ՏԻՄԻՐԵԱԶԵՎ Կ., Զարլզ Դարվին, Բագու, 1900 թ., գ. 25 կ.
ԵՐԻՄԵԱՆ Հ. ՍԻՄ., Ալիշան հայր Ղեւոնդի կենսագրութիւն, պատկերներով, Վենեցիա, թ., գ. 1 ր. 50 կ.

Դիմել՝ Въ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. 3—3

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Ա. եւ տրական, գործարանական եւ նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից լ դունված է իբրեւ օժանդակ ձեռնարկ առեւտրական դպրոցներում
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու տեսի անձանց՝ գործնական ձեւով հաշւապահութիւն 4 ամսում, պատա խանատուութեամբ, եւ հարկաւոր դէպքում՝ յանձնարարականով
ՊԱՐԱԳՄՈՒՆԴԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, նաեւ նաւթարդիւնաբերական եւ նաւթագործական հաշւապահութիւն։
2) Առեւտրական թուաբանութիւն։
3) Առեւտրական թղթակցութիւն։
4) Մուրհակային եւ առեւտրական օրէնքներ։
5) Վայելչագրութիւն եւ ուղղագրութիւն ամենավատ ձեռագրի։
Ընդունելութիւն ամեն օր։ Պարապմունքները սկսվում են 1902 թ. Սեպտեմբերի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ՝ 60 բուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։
Դասընթացքը աւարտողներին տրվում է, Ֆինանսների նախարարութեան թողարկած ծրագրի համաձայն, վկայագիր։
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիս ս, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիր ուղարկվում է ձրի։
Վերեւում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ (կ. ե. հ. չ.) 11—35

Дозволено Цензурою, Тифлисъ, 26 Іюля 1902 г.

Электропечатня Груз. Издат. Т—ва, Б.-Ванкская ул.